Հաստատված է
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2020թ. փետրվարի 24-ի թիվ 10 որոշմամբ
Խորհրդի նախագահ՝ Դավիթ Խիթարյան

_____
ստորագրություն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) սահմանում է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ) մասնագիտության կրթական ծրագրերի արտաքին գնահատման անցկացման նպատակը, ՄԿԾ գնահատող հանձնաժողովի կազմը (այսուհետ՝ Հանձնաժողով), ՄԿԾ արտաքին գնահատումը, հանձնաժողովի զեկույցին ներկայացվող պահանջները և պատրաստման կարգը:
2. Ընթացակարգիր իրագործման իրավական հիմքերն են ՀՀ ՀՀ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքները, ինչպես նաև՝ Ինստիտուտի կանոնադրությունը:
3.Ընթացակարգը հաստատում և դրանում փոփոխություններ է կատարում Ինստիտուտի գիտական խորհուրդը:
4. ՄԿԾ-նրը ենթակա են արտաքին գնահատման 5 տարին մեկ:

2. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

5.Կրթական ծրագրերի արտաքին գնահատման գործընթացի նպատակն է գնահատել ծրագրի մշակման, իրականացման որակը, պատասխանատու ֆակուլտետների/ամբիոնների կարողությունը՝ ՄԿԾ–ն իրականացնելու համար սահմանված ծրագրային կողմնորոշիչներին, կրթության ներքին և արտաքին որակի պահանջներին համապատասխան:

3.ՄԿԾ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՎ ԿԱԶՄԸ

6. Հանձնաժողովը ձևավորվում է ՄԿԾ-ների արտաքին գնահատման իրականացման նպատակով, որն իր գործունեությունն իրականացնում է անկախության, օբյեկտիվության, հաշվետվողականության և թափանցիկության

սկզբունքների հիման վրա:Հանձնաժողովը ունի նախագահ և անդամներ, որոնց հետ Ինստիտուտը կնքում է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր:
6.1 Հանձնաժողովի կազմը որոշելիս հաշվի են առնվում ծրագրի բնույթը և նպատակները, մասնագիտական ոլորտը, հանձնաժողովի անդամների ծրագրի մշակման, իրականացման և գնահատման փորձը:
7.Արտաքին փորձագետներ կարող են լինել նրանք, ովքեր համապատասխանում են հետևյալ պահանջներին.

1) Պետք է ունենան ակադեմիական և/կամ համապատասխան բնագավառում մասնագիտական որակավորում կամ պետք է լինեն մասնագիտական ոլորտի ներկայացուցիչ:
2) Արտաքին փորձագետներից առնվազն մեկը պետք է լինի ակադեմիական (բուհական, գիտական) միջավայրից, իսկ մյուսները ունենան քննարկվող ծրագրի մասնագիտական ոլորտին առնչվող վերջին 3-5 տարվա պրակտիկ աշխատանքի փորձ:
3) պետք է ունենան փորձաքննություն իրականացնելու կարողություն:
4) Հանձնաժողովի կազմը բաղկացած է 3-5 հոգուց՝ կախված ՄԿԾ–ի արտաքին գնահատման ծավալից և բնույթից:

4.ՄԿԾ արտաքին գնահատման անցկացումը

8. ՄԿԾ արտաքին գնահատումն իրականացվում է Ինստիտուտի ռեկտորի հրամանով և հաստատված ժամանակացույցին համապատասխան:
9.Հաձնաժողովը ուսումնասիրում և գնահատում է ՄԿԾ–ի իրականացման արդյունավետությունը ինչպես փաստաթղթային եղանակով, այնպես էլ Ինստիտուտ այցի միջոցով: Այցի նպատակն է հանդիպումներ ունենալ և տեղում ծանոթանալ ՄԿԾ–ի կիրառմանը, ինչպես ամբողջ բուհի համատեքստում, այնպես էլ՝ ուսանողների, դասախոսների տեսանկյունից:
10. Անհրաժեշտության դեպքում ՄԿԾ–ից բացի, Հանձնաժողովը իրավունք ունի պահանջելու նաև այլ որակական և քանակական տվյալներ, փաստաթղթեր, կատարել ռեսուրսների դիտարկում:
11. Ուսումնասիրության ավարտից ոչ ուշ քան մեկ շաբաթվա ընթացքում Հանձնաժողովը կազմում է զեկույց՝ հիմք ընդունելով ՄԿԾ–ի կատարման արդյունքները, հավաքված տվյալները, թիրախային խմբերի հետ հանդիպումները:

5.ՄԿԾ արտաքին գնահատման զեկույցը

12.Արտաքին գնահատման արդյունքը Հանձնաժողովի կազմած զեկույցն է, որն ամբողջացնում է գնահատման եզրակացությունների և բարելավման առաջարկությունների փաթեթը, որը ընդունվում է ի գիտության Գիտական խորհրդի կողմից ՝ առաջարկված բարելավումները իրականացնելու պայմանով:

13.Եզրակացությունները կարող են ներառել ինչպես պահանջներ, այնպես էլ բարելավման առաջարկություններ, որոնք ենթակա են կատարման շահագրգիռ ուսումնական ստորաբաժանումների կողմից:
14. Հանձնաժողովի նախագահը և բոլոր անդամները ստորագրում են զեկույցի վերջնական տարբերակը:
15. Մինչ վերջնական զեկույցը ինստիտուտի գիտական խորհրդին ներկայացնելը Հանձնաժողովը ներկայացնում է ՄԿԾ–ի գնահատման վերաբերյալ նախնական զեկույց:
16. ՄԿԾ–ն իրականացնող համապատասխան ստարաբաժանումները կարող են մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել դիտողություններ և առարկություններ զեկույցի վերաբերյալ, եթե ունեն:
17. Առարկություններ և դիտողություններ չունենալու դեպքում նախնական զեկույցը համարվում է վերջնական:
18. Վերջնական զեկույցը ներկայացվում է նախնական զեկույցի ներկայացումից 2 շաբաթ անց: